«ԱԸՊ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ»

«ԷԿՈԼՈՒՐ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԿ

«ԱԸՊ համակարգի ներդրման նախադրյալները համայնքներում» զեկույցը ստեղծվել է Շվեդիայի կողմից ֆինանսավորվող և Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից իրականացվող «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի «Իրազեկվի՛ր և սատարի՛ր ՀՀ-ում Արտադրողի ընդլայնված պատասխանատվության համակարգի ներդրմանը՝ ի նպաստ առողջ շրջակա միջավայրի» ենթածրագրի շրջանակում:

Ներկայացված տեսակետները, եզրակացություններն ու կարծիքները պատկանում են հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտահայտեն ծրագրի, Հայաստանի ամերիկյան համալսարանի կամ Շվեդիայի կառավարության դիրքորոշումը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ 5

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԸԳՀ-ՈՎ ՍՏԱՆԶՆԱԾ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 7

ՀՀ-ՈՒՄ ԱԸՊ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 15

ԱԲՈՎՅԱՆ, ՄԵԾԱՄՈՐ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԱԸՊ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆՁԵՌԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 31

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԸՊ	Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն
ԱՊԿ	Արտադրողի պատասխանատվության կազմակերպություն
ԱՏԳ ԱԱ	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ
ԵՀ	Եվրոպական համայնք
ՏԻՄ	տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀԱՀ	Հայաստանի Ամերիկյան Համալսարան
ՀԸԳՀ	Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՃՔ	Ճանապարհային քարտեզ
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊԷՏ	պոլիէթիլեն տերեֆտալատ
ԿԿԹ	կոշտ կենցաղային թափոն
ԿԿԹԿ	կոշտ կենցաղային թափոնների կառավարում
ՍՊԸ	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
5R հերարխիա	թափոնների կառավարման հինգաստիճան հիերարխիա (Refuse, Rethink, Reduce, Reuse (or Repair), and Recycle)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ԱԸՊ համակարգի ներդրման նախադրյալները համայնքներում» զեկույցի նպատակն է բացահայտել թափոնների կառավարման խնդիրները ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան, Աբովյան և Արմավիրի մարզի Մեծամոր համայնքների օրինակով, նպաստել ԱԸՊ համակարգի ներդրմանը համայնքներում:

Համայնքների ընտրությունը պայմանավորված է սկզբնաղբյուրում թափոնների տեսակավորման փորձով, վերամշակման ընկերությունների առկայությամբ, 2 համայնքի՝ Հրազդանի սանիտարական աղբավայրի շահառու լինելով:

Զեկույցում ուսումնասիրվել են ՀԸԳՀ-ով ստանձնած՝ թափոնների կառավարման հինգաստիճան հիերարխիայի և ԱԸՊ համակարգի ներդրման պարտավորությունները: Զեկույցի պատրաստման համար տեղեկատվական հիմք են թափոնների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը, միջազգային համաձայնագրերը, միջազգային զեկույցները, պետական մարմիններին և տեղական մարմիններին ուղղված հարցումների պատասխանները, ոլորտի փորձագետների հետ անցկացված հարցազրույցները, թիրախ համայնքներում քննարկումների արդյունքներ:

1.«Թափոնների կառավարման ոլորտի ներկա վիճակը ՀՀ-ում» բաժնում նկարագրված են Հայաստանում թափոնների կառավարման խնդիրները:

2.«Թափոնների կառավարման ոլորտը ՀԸԳՀ-ով ստանձնած հանձնառությունների համատեքստում» բաժնում ներկայացվում է, թե որքանով է երկիրը հասել համաձայանգրով սահմանված թիրախներին:

3.«ՀՀ-ում ԱԸՊ համակարգի ներդրման գործընթացները և համակարգի ընդհանուր բնութագիրը» բաժինը ներկայացնում է ԱԸՊ համակարգի սկզբունքները և Հայաստանում իրականացվող քայլերը:

4.«Աբովյան, Մեծամոր, Հրազդան համայնքներում թափոնների կառավարման վիճակը և ԱԸՊ համակարգի ընձեռած հնարավորությունները» ներկայացնում է թիրախ համայնքներում գույքագրած թափոնների կառավարման խնդիրները, ԱԸՊ համակարգի ներդրման հնարավորությունները:

1. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ

2020 թվականի դրությամբ Հայաստանում քարտեզագրվել է սանիտարական չափանիշներին չհամապատասխանող 297 աղբավայր: 2021-2024թթ. հանրապետության համայնքներում դադարեցվել է շուրջ 100 աղբավայրի շահագործում:[1] Գործող աղբավայրերը հիմնականում ցանկապատված չեն, չունեն թափոնաջրերի հեռացման համակարգ, թափոնները չեն կշռվում՝ (բացառությամբ Հրազդանի սանիտարական աղբավայրի), չունեն պահակակետ, հոսանքի և ջրի մատակարարում, պարբերաբար, ինքնայրվում են կամ հրդեհվում:

Աղբավայրերն աղտոտում են հողը և ջուրը ծանր մետաղներով և թունավոր նյութերով, մթնոլորտային օդը՝ թունավոր և ջերմոցային գազերի արտանետումներով: Թունավոր գազերը և փոշին քաղցկեղածին են, առաջացնում են ասթմա, բրոնխիտ, ալերգիկ ռեակցիաներ: Աղտոտված ջրերը, ստորերկրյա ջրերին խառնվելով, կարող են հայտնվել սննդային շղթայում՝ ախտահարելով մարդու օրգանիզմը: Թափոնների մեջ սնունդ փնտրող կենդանիները կարող են դառնալ վարակների տարածողներ:

Ըստ տարբեր աղբյուրների՝ աղբավայրերում տարեկան միջինում տեղադրվում է ՀՀ բնակավայրերում առաջացած մոտ 700 հազար տոննա կոշտ կենցաղային աղբ: Ըստ ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի 2020 թ. ուսումնասիրության[2]՝ թափոնի կազմն է՝ ապակի, պլաստիկ, թուղթ՝ շուրջ 25%, բոլոր օրգանական թափոնները՝ շուրջ 57 %, այլ մնացորդային աղբ՝ 15 %:

[1] https://api.mtad.am//storage/pages/files/2026/03/pdf/31_11-34-sc591-69cb791bcc0de.pdf

[2] https://ace.aua.am/wp-content/uploads/2023/08/WQCS-Report-Arm.pdf



Նկար 1. Թափոնի կազմը՝ ըստ ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի ուսումնասիրության

Աղբավայրեր ուղղվող թափոններից 365-440 հազար տոննան[3] տեղադրվում է Երևանի Նուբարաշենի աղբավայրում:

Երևան քաղաքի թափոնների կառավարման 2025-2029թթ. ծրագրի համաձայն[4]՝ Նուբարաշենի աղբավայրում տեղադրված աղբի 50%-ն օրգանական թափոններ են: 17%-ը պլաստիկ է, թուղթը և ստվարաթուղթը՝ 9%, ապակին՝ 6%, մետաղը 3%, այլ թափոնները՝ 11%:

Կենցաղային թափոններին են խառնվում նաև մարտկոցներ, ժամկետանց դեղորայք և կենցաղում առաջացող այլ վտանգավոր թափոններ, որոնք խիստ վնասակար են բնության և մարդու առողջության համար, շինարարական աղբ, որն իր մեջ պարունակում է ասբեստ:

[3] https://www.yerevan.am/hy/communal-services/

[4] https://www.yerevan.am/uploads/media/default/0002/51/a762da89077245bd7b2ef137b1281a8e3f3fda5a.pdf



Նկար 2. Նուբարաշենի աղբավայրում տեղադրված աղբի կազմը՝ ըստ 2020թ. կատարված ուսումնասիրության

Վերամշակելի թափոնները կազմում են կենցաղային թափոնների ծավալի մոտ 50 տոկոսը: Մի քանի բնակավայրերում մասնակի ներդրված թափոնների տեսակավորման համակարգերի շնորհիվ հավաքվում է երկրում վերամշակվող թափոնների (ապակի, թուղթ, պլաստիկ, մետաղ) ողջ ծավալի ոչ ավելի քան 10%-ը: Վերամշակելի թափոնների զգալի մասը տեսակավորվում է աղբանոցներում ոչ ֆորմալ խմբերի կողմից:

Չի իրականացվում աղբավայրերում կուտակվող աղբի գերակշիռ մաս կազմող օրգանական թափոնների վերամշակում:

Ըստ պաշտոնական տվյալների՝ Հայաստանում գործում է պլաստիկ թափոններ վերամշակող 5 ընկերություն, թղթե թափոններ վերամշակող 9 ընկերություն, ապակե թափոններ վերամշակող 2 ընկերություն, մետաղե թափոններ վերամշակող 5 ընկերություն, բժշկական վտանգավոր թափոններ ոչնչացնող 3 ընկերություն, օգտագործված ավտոմոբիլային անվադողեր, յուղեր, ֆիլտրեր և այլ վտանգավոր թափոններ վերամշակող 1 ընկերություն, այլ տեսակի վտանգավոր թափոնների գործածությամբ զբաղվող 3 ընկերություն[5]: Ըստ վերամշակող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ունեցած հարցազրույցների՝ չկան խրախուսման մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան զարգացնել թափոնների

[5] https://e-draft.am/projects/8867/justification

վերամշակման ոլորտը: Չի խրախուսվում նաև վերամշակված նյութերի օգտագործումը: Բացակայում են վերամշակման ոլորտի վերաբերյալ հավաստի վիճակագրական տվյալները: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների» ռեեստրը կարիք ունի վերանայման:

ՀՀ համայնքներում աղբահանության ծառայությունների մատուցման համար կատարված ծախսերը գերազանցում են ծառայությունների դիմաց հավաքագրված վճարները: «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում է աղբահանության վճարի դրույքաչափը[6]: Աղբահանության համար գանձվող վճարը Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ Երևանի, 150-250 դրամի սահմաններում է: Երևանում 2025 թ-ից սկսած աղբահանության վճարը գանձվում է ամսական ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի: Մեկ քառակուսի մետր մակերեսի համար սահմանվել է 13 դրամ:

2. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԸԳՀ-ՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀԸԳՀ-ն ստորագրվել է 2017թ-ին, ուժի մեջ է մտել 2021թ.: Համաձայնագրի դրույթների կատարման համար 2019թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 666-Լ որոշումը[7], 2021թ. ընդունվել է ՀՀ վարչապետի՝ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ 587-Լ որոշումը[8], ճանապարհային քարտեզի նոր փոփոխություններն ընդունվել են 2026թ. հունվարի 9-ին[9]:

ՀԸԳՀ-ի 3-րդ «Շրջակա միջավայր» գլխի 45-50 հոդվածներով ամրագրված են շրջակա միջավայրի «Թափոնների կառավարման» բաղադրիչի բարելավմանն ուղղված դրույթներ (հոդված 46՝ 1d ենթակետ, հոդված 48՝ (b) կետի iii ենթակետ): Նույն գլխի 50-րդ հոդվածով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության մոտարկում ՀԸԳՀ համաձայնագրի III հավելվածում

[6] https://www.arlis.am/hy/acts/137604

[7] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=153164

[8] https://www.arlis.am/hy/acts/153159

[9] https://www.arlis.am/hy/acts/219397

նշված՝ Եվրոպական միության ակտերին ու միջազգային փաստաթղթերին՝ այդ Հավելվածի դրույթներին համապատասխան:

Հավելված III-ի «Թափոնների կառավարում» բաժնում սահմանված է, որ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 4 տարվա կողմերը պետք է ներդնեն թափոնների կառավարման հինգաստիճան հիերարխիային համապատասխան թափոնների կառավարման պլաններ և կազմեն թափոնների առաջացման կանխարգելման ծրագրեր համաձայն Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ թափոնների մասին հրահանգի: Հաջորդ պահանջը Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում, պետք է սահմանվեն «Աղտոտողը վճարում է» և արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմները, համաձայն նույն հրահանգի:

Այդ դրույթների կառավարման համար միջոցառումներ են նախատեսված Համաձայնագրի ճանապարհային քարտեզում:

ՀԸԳՀ – Հավելված 3-Թափոնների կառավարում

- **ՀԸԳՀ. «Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում (կոշտ կենցաղային թափոնների համար) (Որոշ հրահանգներ ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ հրահանգ՝ թափոնների մասին)»:**

Ենթակա է կիրարկման Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում:

- ***2019թ. ընդունված ճանապարհային քարտեզով (ՃՔ) նախատեսված 104.1 միջոցառում.*** «Միջազգային ստանդարտների համապատասխան Հայաստանի Հանրապետությունում թափոնների կառավարման համակարգի ներդնում՝ ներպետական օրենսդրության և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) նշանակում: Մեկնարկ՝ 2022թ. առաջին եռամսյակ, Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 4 տարվա ընթացքում:

Ակնկալվող արդյունքներ

- Թափոնների արդյունավետ կառավարում, թափոնների առաջացման կանխարգելում և դրանց հետևանքով շրջակա միջավայրի հասցված վնասի կանխարգելում և նվազեցում:
- ՀՀ Կոշտ թափոնների կառավարման ռազմավարություն
- ՀՀ-ում թափոնների կառավարման հինգաստիճան համակարգի հիմնում

- ԵՄ չափանիշներին համապատասխան տասը նոր աղբավայրերի ստեղծում, թափոնների արդյունավետ փոխադրում հեռացում:

- **ՀԸԳՀ. «Թափոնների կառավարման հինգաստիճան ստորակարգությանը (հիերարխիա) համապատասխան թափոնների կառավարման պլանների և թափոնների առաջացման կանխարգելման ծրագրերի կազմում (Որոշ հրահանգներ ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ հրահանգ՝ թափոնների մասին)»:**

Ենթակա է կիրարկման Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝4 տարվա ընթացքում:



Նկար 3. Թափոնների հինգաստիճան հիերարխիա

Թափոնների հնգաստիճան հիերարխիան ունի թափոնների կառավարման առաջնության հետևյալ հերթականությունը.

1) թափոնների առաջացման կանխարգելում՝ քանակի կրճատում թափոնների առաջացման սկզբնաղբյուրում

2) Թափոնների վերաօգտագործում, երբ այլ անձանց համար անցանկալի, ոչ պիտանի նյութերը, դրվում են տնտեսական շրջանառության մեջ այլ նպատակներով

3) Վերամշակում (օգտահանում)՝ երբ տեխնոլոգիական գործընթացների արդյունքում փոխվում են թափոնների ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկությունները և դրանք օգտագործվում են որպես երկրորդային նյութ

4) Էներգիայի վերականգնում՝ թափոնների ջերմային մշակմամբ՝ ուղղակի այրմամբ կամ առանց դրա, ջերմության և էներգիայի վերականգնում
5) Թափոնների հեռացում՝ թափոնների անվնաս տեղադրում (թաղում) հսկվող սանիտարական աղբավայրերում (որպես թափոնների կառավարման նվազագույն նախընտրելի մոտեցում):

- **2019թ. ընդունված *ճանապարհային քարտեզով* 104.2 միջոցառում.**

«Թափոնների կառավարման հինգաստիճան համակարգի կիրառում, որը ներառում է
- թափոնների առաջացման նվազեցում

- թափոնների տեսակավորված հավաք
- թափոնների վերամշակում»:

Մեկնարկ՝ 2022թ. առաջին եռամսյակ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 4 տարվա ընթացքում:

Ակնկալվող արդյունքներ

- Թափոնների արդյունավետ կառավարում, թափոնների առաջացման կանխարգելում և դրանց հետևանքով շրջակա միջավայրի հասցված վնասի կանխարգելում և նվազեցում:
- ՀՀ Կոշտ թափոնների կառավարման ռազմավարություն
- ՀՀ-ում թափոնների կառավարման հինգաստիճան համակարգի հիմնում
- ԵՄ չափանիշներին համապատասխան 2 նոր աղբավայրերի ստեղծում, թափոնների արդյունավետ փոխադրում հեռացում:

Հայաստանի իրականացրած քայլերը հինգաստիճան հիերարխիային հասնելու ուղղությամբ

Հայաստանում իրականացվել են օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ թափոնների կառավարման արդյունավետության բարձրացման համար: 2021թ. ընդունվել է ՀՀ Աղբահանության համակարգի ռազմավարությունը:[10] Այն նախատեսել է 7 միջոցառում թափոնների կառավարման հինգաստիճան հիերարխիայի համար:

Այդ միջոցառումներն են.

1.«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախատեսվել է օրենքով սահմանումների հստակեցում, հինգաստիճան հիերարխիայի ամրագրում, սկզբնաղբյուրում տեսակավորման դրույթի ամրագրում, աղբի տեսակների համար առանձին կարգավորումների սահմանում, աղբի նվազեցման ու օգտահանման համար խթանիչ մեխանիզմների սահմանում:

Ռազմավարության կատարողական

Օրենքն ընդունվել է 2023թ.[11]:

[10] https://api.mtad.am//storage/pages/files/2022/02/pdf/17_13-57-sc122-62e15fcd4d37d.pdf

[11] http://parliament.am/legislation.php?sel=show&ID=8728&lang=arm

2.Աղբի բաղադրության ուսումնասիրության իրականացման համար մեթոդաբանության մշակում: Նախատեսվել է հանրապետությունում պարբերաբար աղբի բաղադրության ուսումնասիրության ապահովում:

Ռազմավարության կատարողական

Ըստ ՏԿԵՆ հաշվետվության[12]՝ մեթոդաբանությունը մշակվել է և ներկայացվել մարզպետարաններ և համայնքներ:

3.Կենսաքայքայվող թափոնների օգտահանման և մշակման առաջարկությունների և ընթացակարգերի մշակում: Նախատեսվել է կենսաքայքայվող թափոնների առանձնացված հավաքում, փոխադրում և օգտահանում ու մշակում:

Ռազմավարության կատարողական

Ընդունվել է Կենսաքայքայվող թափոնների հավաքման, տեղափոխման, պահման ու հեռացման ընթացակարգը, որը հաստատվել է ՏԿԵ նախարարի 23.05.2024թ. թիվ 37-Լ հրամանով[13]:

4.Թափոնների հիերարխիայի իրագործմանը նպաստող գործողությունների համար տնտեսական արտոնությունների կիրառման օրենսդրական հիմքերի ստեղծում: Նախատեսվել է սակավաթափոն արտադրության, թափոնների քանակի նվազեցման, դրանց օգտահանման, կրկնօգտագործման, վերամշակման գործընթացների խրախուսում և հիերարխիայի իրագործմամբ զբաղվող կազմակերպությունների հետաքրքրության բարձրացում:

Ռազմավարության կատարողական

Ըստ ՏԿԵՆ հաշվետվության՝ Էկոնոմիկայի նախարարի 2022թ. սեպտեմբերի 9-ի N1503-Լ հրամանով հաստատվել է Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծման ճանապարհային քարտեզը: Քայլեր են ձեռնարկվում Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծման (շրջանաձև տնտեսություն) հայեցակարգի նախագծի մշակման ուղղությամբ:

5.Թափոնների օգտահանման և վերամշակման գործընթացի և տեխնոլոգիաների, ինչպես նաև օգտահանված և վերամշակված արտադրանքների նորմերի,

[12] https://api.mtad.am//storage/pages/files/2026/03/pdf/31_11-34-sc591-69cb791bcc0de.pdf

[13] https://api.mtad.am//storage/images/legal-acts/665078cbbb7fd-hraman_37-L.pdf

ստանդարտների և պահանջների սահմանում: Նախատեսվել է թափոնների վերամշակման և օգտահանման տեխնոլոգիաների, ինչպես նաև արտադրվող արտադրանքի համար էկոլոգիապես և մարդու առողջության վրա անվնաս պահանջների, նորմերի և ստանդարտների սահմանում:

Ռազմավարության կատարողական

Ըստ ՏԿԵՆ հաշվետվության՝ մշակվել և հաստատվել են հետևյալ ստանդարտները.
- ՀՍՏ ԻՍՕ 18605:2022 «Փաթեթավորում և շրջակա միջավայր: Էներգիայի օգտահանում»
- ՀՍՏ ԻՍՕ 18604:2022 «Փաթեթավորում և շրջակա միջավայր: Նյութի վերամշակում»
- ՀՍՏ ԻՍՕ 14855-12022 «Կոմպոստացման վերահսկելի պայմաններում պլաստիկ նյութերի վերջնական աերոբ կենսաքայքայելիության որոշում. Անջատված ածխածնի երկօքսիդի վերլուծության կիրառման մեթոդ - Մաս 1. Ընդհանուր մեթոդ»:

6.Արտադրողի ընդլայնված պատասխանատվության կիրառման նպատակով տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացում: Նախատեսվել է Արտադրողի ընդլայնված պատասխանատվության և «աղտոտողը վճարում է» սկզբունքի ու գործիքի կիրառման համար անհրաժեշտ ուսումնասիրության ապահովում:

Ռազմավարության կատարողական

Ըստ ՏԿԵՆ հաշվետվության[14]՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության (Sida) և Հայաստանի Ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի հետ իրականացվող «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի շրջանակներում նախատեսվում է ներդնել «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության» համակարգը: Այդ ուղղությամբ իրականացվել են միջազգային փորձի ուսումնասիրություններ, մասնավոր հատվածի ներկայացուցիչների և այլ շահառու կողմերի հետ խորհրդատվական հանդիպումներ, պատրաստվել է հայեցակարգային դրույթների նախագիծ: «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համագործակցությամբ իրականացվել է նաև օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատում, տնտեսական ազդեցության գնահատում և 2026 թվականի

[14] https://api.mtad.am//storage/pages/files/2026/03/pdf/31_11-34-sc591-69cb791bcc0de.pdf

հունիս ամսին «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը[15] ներկայացվել է հանրային քննարկման (e-draft) հարթակում:

Փաթեթավորումից առաջացող թափոնների մասով ԱԸՊ-ի մեխանիզմների, այդ թվում՝ նշված թափոնների տեսակավորված հավաքման և վերամշակման գործընթացների փորձարկման նպատակով Հայաստանի ամերիկյան առևտրի պալատի նախաձեռնությամբ մեկնարկել է պլիտային ծրագիր Հրազդան քաղաքում:

7.Կենցաղային աղբի տեսակավորմանն ու վերամշակմանը և օգտահանմանն ուղղված միջոցառումների իրականացում: Նախատեսվել է աղբի՝ որպես երկրորդային ռեսուրս օգտագործում և աղբավայրում տեղադրվող աղբի քանակի նվազեցում

Ռազմավարության կատարողական

Ըստ ՏԿԵՆ հաշվետվության՝ 2023թ. թիվ ՀՕ-137-Ն օրենքով հավանության արժանացած «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում ամրագրվել են ոլորտի պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, մասնավորապես՝ առաջացող աղբի քանակի նվազեցումը, աղբի տեսակավորման, վերօգտագործման, վերամշակման և օգտահանման գործողությունների կիրառումը և աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալների նվազեցումը, շրջանաձև տնտեսության խթանումը: Միաժամանակ նախարարության կողմից մշակված՝ աղբավայրերի շահագործման ու փակման նվազագույն նորմերի սահմանումը, աղբահանության տեղական պլանների կազմման, աղբի բաղադրության ուսումնասիրության մեթոդաբանությունների մշակման, շինարարական, մեծ գաբարիտով աղբի, կենսաքայքայվող աղբի հավաքման ու տեղափոխման ընթացակարգերն ուղղված են ինստիտուցիոնալ և օրենսդրական հենքի ստեղծմանը՝ թափոնների կանխարգելման ու քանակի նվազեցման ծրագրերի մշակման ու իրականացման համար: Դրա հետ մեկտեղ, միջազգային կառույցների հետ նշված ուղղությամբ ծրագրերի իրականացման մասով միջազգային գործընկերների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ իրականացվում են մի շարք ծրագրեր՝ ուղղված թափոնների տեսակավորված հավաքմանը ու դրանց հետագա վերամշակմանը, մասնավորապես Երևան, Գյումրի, Վանաձոր, Սևան համայնքներում:

- **ՀԸԳՀ. «Աղտոտողը վճարում է» և արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմի սահմանում (14-րդ հոդված)»: <u>Ենթակա է կիրարկման Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում:</u>**

[15] https://www.e-draft.am/projects/10266/about

- **2019թ. ընդունված ՃՔ-ով նախատեսված 104.3 միջոցառում. «Աղտոտողը վճարում է» և արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմի սահմանում (14-րդ հոդված)»:** Կատարման ժամկետ՝ 2024թ.:

Ակնկալվող արդյունք.

«Աղտոտողը վճարում է» և արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմի սահմանում

- **2026թ. ընդունված ՃՔ-ով 102 միջոցառում.«Մշակել և ընդունել «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» օրենքը»:** Կատարման ժամկետը՝ 2025թ. 4-րդ եռամսյակ:

Ակնկալվող արդյունք

Դեպի աղբավայրեր տեղափոխվող հատուկ թափոնների ծավալների կրճատում, հատուկ թափոնների օգտահանման և վերամշակման ծավալների ավելացում, սակավաթափոն տեխնոլոգիաների կիրառում, շրջակա միջավայրի վիճակի բարելավում:

Կատարողական՝ ըստ «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի

Մշակվել է «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» օրենքի նախագիծը ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից Շվեդիայի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի շրջանակում՝[16] Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի տեխնիկական աջակցությամբ: ԱԸՊ ապրանքների ցանկը պետք է հաստատի ՀՀ կառավարությունն օրենքի ընդունումից հետո: 2026 թվականի հունիս ամսին «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը[17] ներկայացվել է հանրային քննարկման (e-draft) հարթակում:

[16] https://www.ecolur.org/hy/news/waste/15955/
[17] https://www.e-draft.am/projects/10266/about

Եզրակացություն

- Թափոնների առաջացման կանխարգելման և դրանց հետևանքով շրջակա միջավայրի հասցված վնասի կանխարգելման և նվազեցմանն ուղղված քայլերն անբավարար են: Հիմնականում մշակվել և ընդունվել են իրավական ակտեր, սակայն դրանց կիրարկումը սաղմնային վիճակում է: Դրա վկայությունն է վերամշակելի թափոնների ընդամենը 10%-ի վերամշակումը, թափոնների տեսակավորման ցածր մակարդակը: Հիմնականում թափոնները շարունակում են խառն վիճակում տեղափոխվել աղբավայրեր:
- ՀՀ Կոշտ թափոնների կառավարման ռազմավարություն չի ընդունվել: Փոխարենն ընդունվել է Աղբահանության համակարգի ռազմավարությունը:
- ՀՀ-ում թափոնների կառավարման հինգաստիճան համակարգի հիմնումը սաղմնային վիճակում է: Գործնականում առավել զարգացած է միայն վերջին փուլը՝ թափոնների հեռացումն աղբավայր: Հայաստանի աղբավայրերը չեն համապատասխանում սանիտարական աղբավայրերի նորմերին: Դեռևս 1 աղբավայր է Հայաստանում համարվում սանիտարական՝ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի համայնքներին սպասարկող Հրազդանի աղբավայրը, որը շահագործման է հանձնվել 2025թ.:
- 2026թ. ընդունվել է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում և հարակից օրենքներում կատարված լրացումներով[18], որի համաձայն 2027թ. հունվարի 1-ից Հայաստանում այլևս չեն վաճառվելու պոլիէթիլենային տոպրակներ ու պարկեր, մեկանգամյա օգտագործման պլաստիկ սպասք, ինչպես նաև փրփրապլաստից տարաներ և ձողիկներ: Կանխարգելվելու է այս ապրանքներից առաջացող թափոնների առաջացումը:
- Մշակվել է «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» օրենքի նախագիծը, որի ընդունումը որոշակի ապրանքների վաճառքից գոյացող թափոնների նկատկմամբ այդ ապրանքների արտադրողները և ներմուծողները պատասխանատվություն կստանձնեն և կապահովեն այդ թափոնների տեսակավորված հավաքումը, վերամշակումը և օգտահանումը:

[18] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=10259&lang=arm

3. ՀՀ-ՈՒՄ ԱԸՊ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱԸՊ-ն Եվրոպական միությունում գործող երկարամյա համակարգ է, որը հատուկ ապրանքներ արտադրողներին կամ ներմուծողներին պատասխանատու է դարձնում այդ ապրանքների սպառումից առաջացող հատուկ թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության համար: Ընկերություններն իրականացնում են հատուկ թափոնների տեսակավորված հավաքում, վերամշակում, վնասազերծում կամ անվտանգ պահեստավորում, ինչպես նաև ապահովում են հանրային իրազեկվածության բարձրացում: Արտադրողները և ներմուծողները վճարում են ԱԸՊ վճարներ, որոնք տնօրինում է մասնավոր հատվածի կողմից ստեղծված, լիցենզավորված կառույցը՝ Արտադրողի պատասխանատվության կազմակերպությունը (ԱՊԿ): Էկոլոգիապես անվտանգ կառավարման արդյունքում թափոնը վերադառնում է տնտեսություն որպես ռեսուրս: Դրանով իսկ ապահովվում է «աղտոտողը վճարում է» սկզբունքի իրացումը:

Հայաստանը պարտավորվել է ներդնել այս համակարգը ՀԸԳՀ-ով և ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով: Համակարգի ներդրումը կնպաստի շրջակա միջավայրի աղտոտման նվազմանը, թափոնների ծավալի կրճատմանը, աղբավայրերի ծանրաբեռնվածության նվազմանը, մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների նվազմանը, ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը, ինչպես նաև կապահովի ՀՀ-ում շրջանաձև և կանաչ տնտեսության զարգացումը, :

Հայաստանում տարեկան գոյանում է մոտ 90 000 տոննա սպառման թափոն ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների, կենցաղային մարտկոցների, էլեկտրական և էլեկտրոնային սարքերի որոշ տեսակների, անվադողերի և շարժիչային յուղերի վաճառքի և օգտագործման արդյունքում: Վերամշակվում է այս թափոնների շուրջ 10%-ը:

Շրջակա միջավայրի նախարարությունը, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի տեխնիկական աջակցությամբ, որը Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացնում է «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» քառամյա ծրագիրը, մշակել է «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» ՀՀ օրենսդրական փաթեթի

նախագիծը[19], որի ընդունմամբ ՀՀ-ում կներդրվի արտադրողի ընդլայնված պատասխանատվության ինստիտուտը։

ԱԸՊ օրենքի նախագիծը կարգավորում է ՀՀ-ում արտադրված կամ ՀՀ ներմուծված արտադրողի ընդլայնված պատասխանատվության ապրանքի՝ ՀՀ-ում օտարման, սպառման կամ օգտագործման արդյունքում առաջացած հատուկ թափոնների գործածության հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես՝ արտադրողի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը, արտադրողի ընդլայնված պատասխանատվության իրականացման խմբային և անհատական ձևերը, ԱՊԿ-ի իրավական կարգավիճակը, գործունեության ուղղություններն ու պայմանները, ԱԸՊ-ի վերաբերյալ օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, ինչպես նաև արտադրողի ընդլայնված պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները։

Ըստ օրինագծի ԱԸՊ նպատակներն են.

- նվազագույնի հասցնել ԱԸՊ ապրանքի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա՝ արտադրողի համար պատասխանատվություն սահմանելով ԱԸՊ ապրանքի ամբողջ կենսացիկլի համար՝ արտադրությունից մինչև հատուկ թափոնների գործածություն
- խթանել ԱԸՊ ապրանքի նախագծման փուլում սակավաթափոն, մատչելի, ծախսարդյունավետ և էկոլոգիապես անվտանգ լուծումների ընտրությունը
- հատուկ թափոնների տեսակավորված հավաքման համակարգի ստեղծումը։

ԱԸՊ խնդիրներն են՝

- վերաբաշխել հատուկ թափոնների գործածության բեռը արտադրողի, սպառողների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև՝ «աղտոտողը վճարում է» սկզբունքի կիրառմամբ

[19] https://e-draft.am/projects/8867

- հատուկ թափոնների գործածության ծավալների ավելացման նպատակով արտադրական կարողությունների ու հզորությունների, նոր աշխատատեղերի ստեղծման խթանումը և երկրորդային հումքի մրցունակության բարձրացումը
- նյութահումքային ռեսուրսների օգտահանման ոչ ենթակա հատուկ թափոններից էներգետիկ ռեսուրսների էկոլոգիապես անվտանգ օգտահանման խթանումը
- դեպի աղբավայր տեղափոխվող հատուկ թափոնների ծավալի կրճատումը և շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա դրանց բացասական ազդեցության նվազեցումը, ինչպես նաև աղբավայրերի թվի կրճատումը
- հատուկ թափոնների գործածության ոլորտում հանրային իրազեկման միջոցառումների իրականացման խթանումը:

Օրինագծով սահմանվել են կառավարության, լիազոր մարմնի և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները:

Օրինագծով, մասնավորապես, տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանվել են հետևյալ իրավասություններ.

1) ԱՊԿ-ների հետ վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքումը

2) ԱՊԿ-ներին հատուկ թափոնների գործածության ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի հաստատումը

3) ԱՊԿ-ների հետ կնքված պայմանագրերի հիման վրա հատուկ թափոնների գործածության ապահովումը

4) հատուկ թափոնների գործածության կարողությունների ստեղծման խթանումը

5) համայնքի տարածքում հատուկ թափոնների գործածության, այդ թվում՝ տեսակավորված հավաքման վերաբերյալ հասարակության իրազեկվածության, էկոլոգիական կրթության և դաստիարակության, ինչպես նաև տեղեկատվական և իրազեկման ծրագրերի իրականացումը և դրանց աջակցությունը

6) հատուկ թափոնների գործածության վերաբերյալ եռամսյակային հաշվետվության ներկայացումը տեսչական մարմնին

7) համայնքի պաշտոնական կայքում տարեկան կտրվածքով հատուկ թափոնների գործածության ապահովման, այդ թվում՝ համայնքի ստացած եկամուտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:

Օրենսդրական փաթեթի ընդունումից հետո ՀՀ կառավարության կողմից կհաստատվի ԱԸՊ ապրանքների ցանկը:

Աղյուսակ 1

ԱԸՊ ապրանքների ցանկը՝ ըստ «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության համակարգի ներդրման տնտեսական ազդեցության ուսումնասիրություն» զեկույցի[20]

ԱՏԳ ԱԱ	Ընդամենը տնտեսավարողների թիվ	Շեմի չափման միավոր	Շեմ (տարեկան շրջանառության մեջ դրված ծավալ)	Շեմը գերազանցող տնտեսավարողների թիվ	որոնց կշիռը ընդհանուր շրջանառության մեջ	որոնց առաջացրած թափոնների կշիռը
2204 2205	142	լիտր	20 000	37	42%	92%
2208	102	լիտր	20 000	30	95%	95%
2206	40	լիտր	20 000	10	93%	94%
2203	53	լիտր	20 0000	31	99%	99%
2201	86	լիտր	300 000	14	95%	98%
2202	309	լիտր	300 000	72	92%	90%
2710 19 820	203	տոննա	20	42	91%	91%
4011, 4012	228	տոննա	100	23	95%	95%

[20] https://ace.aua.am./wp-content/uploads/2026/05/EPR-Economic-Impact-Assessment-2026.pdf?_gl=1*10nzffe*_ga*MTc1ODM0MjkzLjE3NTgyODMzNzM.*_ga_BF2991VMN4*czE3ODM0MTYxOTckbzE2JGcxJHQxNzgzNDE2Mjk0JGozMSRsMCRoMA..

8418 10 200 1, 8418 10 800 1, 841821, 8418 30 200 1, 8418 30 800 1, 8418 40 200 1, 8418 40 800 1, 8450, 852872	627	տոննա	100	11	97%	97%
8506	161	տոննա	1	21	93%	93%

Աղյուսակ 2

ԱԸՊ թափոնների ծավալները՝ ըստ տեսակների, պատշաճ գործածության նորմատիվների՝ համաձայն «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության համակարգի ներդրման տնտեսական ազդեցության ուսումնասիրություն» զեկույցի[21]

Թափոնի տեսակ	Թափոն (տոննա)	Շեմը չգերազանցողների առաջացրած թափոնները	Շեմը գերազանցողների առաջացրած թափոնները
PET պլաստիկ	11 611	594	11 027
Ապակի	40 326	2109	38 017
Ալյումին և այլ մետաղներ	1 726	153	1 573
Շարժիչային յուղեր	7 000	630	6370
Անվադողեր	19 400	1 048	18 352
Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ	9 797	323	9 474
Մարտկոցներ	470	35	435

[21] https://ace.aua.am./wp-content/uploads/2026/05/EPR-Economic-Impact-Assessment-2026.pdf?_gl=1*10nzffe*_ga*MTc1ODM0MjkzLjE3NTgyODMzNzM.*_ga_BF2991VMN4*czE3ODM0MTYxOTckbzE2JGcxJHQxNzgzNDE2Mjk0JGozMSRsMCRoMA..

Սկզբնական փուլում ԱԸՊ ապրանքների շուրջ 2000 արտադրողից և ներմուծողից միայն 300-ն են ստանձնելու ԱԸՊ շրջանակում նախատեսված պարտավորություն, արդյունքում ԱԸՊ ապրանքների օգտագործումից առաջացող թափոնների 90%-ից ավելիի համար կապահովվի պատշաճ գործածություն: Կանխատեսվում է տարեկան մինչև 40,000 տոննա թափոնի վերամշակում, 320-400 նոր կանաչ աշխատատեղի ստեղծում, շուրջ 8-10միլիոն դոլլարի ներդրումների ներգրավում:

4. ԱԲՈՎՅԱՆ, ՄԵԾԱՄՈՐ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԱԸՊ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԶԵՌԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Իրազեկվի՛ր և սատարի՛ր ՀՀ-ում ԱԸՊ համակարգի ներդրմանը՝ ի նպաստ առողջ շրջակա միջավայրի» ծրագրի շրջանակում «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն ԱԸՊ համակարգի ներդրման վերաբերյալ իրազեկման հանդիպումներ է ունեցել Կոտայքի մարզի Աբովյան, Հրազդան և Արմավիրի մարզի Մեծամոր համայնքներում, պարզել համայնքների աղբահանության ոլորտի խնդիրները, ԱԸՊ համակարգի ներդրմանը համայնքների պատրաստվածության վիճակը ՏԻՄ-երի, «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի, տեղական քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, բնակիչների հետ քննարկումների, հարցազրույցների, փաստաթղթերի ուսումնասիրությունների արդյունքում:

Հրազդան համայնք

Հրազդան խոշորացված համայնքի կազմում ընդգրկված են Հրազդան քաղաքը և Լեռնանիստ, Քաղսի, Սոլակ, Ջրառատ գյուղերը: 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում հաշվառված է 68 072 մարդ:

2025թ. Հրազդան համայնքի վարչական տարածքում շահագործման է հանձնվել Հրազդանի սանիտարական աղբավայրը: Այն շահագործող «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի տրամադրած տվյալների համաձայն՝ Հրազդան խոշորացված համայնքից Հրազդանի սանիտարական աղբավայր ամսական տեղափոխվում է 896 տոննա խառը աղբ: Նախկինում գործող Հրազդանի աղբավայրի շահագործումը դադարեցված է: Համայնքի աղբահանությունն իրականացնում է «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ: Այս կազմակերպության բաժնետերերը Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի համայնքներն են: Ամենախոշոր բաժնետերերը Հրազդան և Աբովյան խոշորացված համայնքներն են: Աղբավայրի շահագործմամբ

նախատեսվում է փակել 2 մարզի շուրջ 30 աղբավայր պետական, համայնքային և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

Հրազդանի համայնքապետարանի և «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի միջև կնքված դրամաշնորհային/սուբսիդիոն պայմանագրի շրջանակներում Հրազդանի համայնքապետարանը Ընկերությանն է փոխանցում ամսական 15 600 000 դրամ գումար, որը կազմում է ամսական 230 դրամ/մարդ: Համայնքապետարանը յուրաքանչյուր բնակչի հաշվով ամսական գանձում է 200 դրամ: 30 դրամ տարբերությունը վճարում է համայնքապետարանը:

Այսպիսով՝ աղբահանության վճարները չեն ծածկում աղբահանության իրականացման ծախսերը և լրացուցիչ բեռ են համայնքի բյուջեի ծախսային մասի համար:

Հրազդան համայնքի նախաձեռնողականության շնորհիվ Հրազդան քաղաքում մեկնարկել է թափոնների տեսակավորման գործընթաց: Ըստ Հրազդանի համայնքապետարանի ներկայացուցչի՝ համայնքում թափոնների տեսակավորման միտքն առաջացել է այն ժամանակ, երբ 2025թ. Հրազդանում շահագործման է հանձնվել սանիտարական աղբավայրը, քանի որ կարևորվել է նոր աղբավայր տեղափոխվող խառը աղբի ծավալների կրճատումը:

Հրազդանի համայնքապետարանը 2025թ. գարնանը փոխըմբռնման հուշագիր է ստորագրել «Էկոփակ Հայաստան» հիմնադրամի հետ թափոնների տեսակավորման պիլոտային ծրագրի իրականացման վերաբերյալ: Հրազդան քաղաքի 10 000 բնակիչ ունեցող Միկրոշրջան թաղամասում՝ 35 կետում, տեղադրվել է 70 թափոնաման .յուրաքանչյուր կետում 2-ական թափոնաման ապակու և խառը թափոնների տեսակավորման համար: Ըստ «Էկոփակ Հայաստան»-ի տվյալների՝ ամսական հավաքվում է 1-1.2 տոննա թափոն, որից վերամշակելի է 50%-ը (թուղթ, պլաստիկ): Ապակե թափոններ գործնականում չեն հավաքվում: Երկրորդային տեսակավորումն իրականացնում է «Վեստ Մենեջմենտ» ՍՊԸ-ն, հավաքման ծառայությունը՝ «Մաքրություն» ՍՊԸ-ն: Տեսակավորված թափոնները տեղափոխվում են Վեդի՝ «Վեստ Մենեջմենտ» ՍՊԸ-ի թափոնների տեսակավորման կայան: Այստեղ երկրորդային տեսակավորումից հետո թափոններն ուղարկվում են ՀՀ տարբեր մարզերում գտնվող վերամշակման ձեռնարկություններ: 2026թ. հունիսից թափոնների տեսակավորված հավաքն իրականացնում է «Կոտայքի և Գեղարքունիքի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» ՍՊԸ-ն:

Հրազդան քաղաքի մյուս թաղամասերում և համայնքի բնակավայրերում թափոնների տեսակավորում չի իրականացվում:

Պիլոտային ծրագիրն ունի լոգիստիկ դժվարություններ, քանի որ թափոնների տեսակավորման և վերամշակման ենթակառուցվածքները ՀՀ-ում թույլ են զարգացած:

Հրազդան համայնքում թափոնների առաջնային տեսակավորում է իրականացվում բնակչության շուրջ 7%-ի կողմից:

Թափոնների տեսակավորման գործընթացում համայնքը չունի ֆինանսական ներդրում:

«Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ն ունի թափոնների երկրորդային տեսակավորման կետ և նպաստում է թափոնների տեսակավորման գործընթացին:

Համայնքում չի իրականացվում ԱԸՊ համակարգի ներքո դիտարկվող շահագործումից դուրս եկած անվադողերի, կենցաղային մարտկոցների կազմակերպված հավաք:

Համայնքը պատրաստակամ է ինտեգրվելու ԱԸՊ համակարգում:

Առաջարկություններ Հրազդանի համայնքապետարանին

1. Խորացնել համագործակցությունը «Էկոփակ Հայաստան» հիմնադրամի և «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի հետ՝ ընդլայնելու համայնքում տեսակավորման թափոնամանների տեղադրման աշխարհագրությունը և տեսակավորելու թափոններ ամբողջ համայնքի տարածքում:

2. Նախաձեռնել շահագործումից դուրս եկած անվադողերի, կենցաղային մարտկոցների, էլեկտրական սարքավորումների հավաք՝ սահմանելով հստակ ժամանակացույց և վերահսկման մեխանիզմներ

3. Ակտիվացնել իրազեկման միջոցառումները թափոնների տեսակավորման համար:

4.Աղբահանության կազմակերպման և տեղադրման ծառայությունների ինքնածախսածածկում ապահովելու և այդ ծառայությունների որակը բարելավելու նպատակով բացատրական աշխատանքներ տանել բնակչության շրջանում աղբահանության վարձավճարների հետագա բարձրացման համար:

Աբովյան համայնք

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքն իր մեջ ներառում է Աբովյան քաղաքը և Առինջ, Արամուս, Բալահովիտ, Գեղաշեն, Գետարգել, Կաթնաղբյուր, Կամարիս, Մայակովսկի, Պտղնի և Վերին Պտղնի գյուղերը: Բնակչության թիվը՝ 99093 մարդ:

Աղբահանությունը և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացնում է «Աբովյանի համայնքային կոմունալ ծառայություն համայնքային ոչ-առևտրային կազմակերպությունը: Կոշտ կենցաղային թափոնները տեղադրվում են համայնքային 3՝ Ակունքի, Արամուսի և Բալահովիտի աղբավայրերում: 2 աղբավայրերի շահագործումը դադարեցվել է: Աղբավայրերը չեն համապատասխանում սանիտարական աղբավայրերի չափորոշիչներին: Հաճախ ինքնայրվում են կամ հրդեհվում: Աղբավայրերը ենթակա են շուտափույթ կոնսերվացման: Աբովյան համայնքի աղբը մոտ ապագայում պետք է տեղափոխվի Հրազդանի սանիտարական աղբավայր: Աղբահանության աշխատանքները պետք է իրականացնի «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ն: Ընկերությունը, կապված իր կարողությունների սղության հետ, առայժմ Աբովյան համայնքին աղբահանության ծառայություն չի մատուցում, այն նախատեսվում է 2026 թվականի հունիս ամսից:

Ըստ Աբովյանի համայնքապետարանի տրամադրած տվյալների՝ համայնքում 2025 թվականին հավաքագրվել է 565,65 տոննա աղբ, այն բաշխվել է՝

- Ակունք – 428,6 տոննա
- Բալահովիտ – 99,15 տոննա աղբ
- Արամուս – 37,9 տոննա աղբ:

Բնակչության 1 շնչի հաշվով աղբահանության ծառայության դիմաց գանձվող ամսական վճարը կազմում է.

- Աբովյան քաղաքում – 250 դրամ՝ 1 շնչի հաշվով
- Առինջ գյուղում – 200 դրամ՝ 1 շնչի հաշվով
- Բոլոր գյուղերում 150 դրամ՝ 1 շնչի հաշվով:

2025 թվականին աղբահանության ծառայության համար վճարի հավաքագրումը կազմել է 96,4%: Նույն տարում Աբովյան համայնքում աղբահանության կազմակերպման և աղբավայրերի սպասարկման համար համայնքապետարանը ծախսել է 390 777 225 դրամ: Բնակչությունից գանձվող գումարը չի բավարարում ծախսերը ծածկելու համար: Տարբերությունը վճարում է համայնքապետարանը համայնքի բյուջեից:

Աբովյան համայնքը, լինելով «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի հիմնադիր, ՍՊԸ-ին 2025թ.փոխանցվել է 5 000 000 դրամ (կանխավճարով)։

Աբովյանի համայնքապետարանում «Էկոլուրի» կազմակերպած իրազեկման միջոցառման ժամանակ ի հայտ եկան կազմակերպչական հարցեր՝ «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի կողմից աղբահանության կազմակերպման դեպքում ֆինանսավորման, համայնքապետարանի հետ աշխատանքների տարանջատման վերաբերյալ։

Աբովյան համայնքում չի իրականացվում թափոնների տեսակավորում։ Պատճառներից համայնքապետարանը նշել է հանրապետությունում թափոնների վերամշակման ենթակառուցվածքների թույլ զարգացվածությունը, տեսակավորման կարևորության վերաբերյալ հանրային ցածր տեղեկացվածությունը։

Աբովյան համայնքի տարածքում գործում է թափոնների վերամշակման 4 կազմակերպություն։

Աբովյան համայնքը չի իրականացնում թափոնների տեսակավորում։

Համայնքում չի իրականացվում թափոնների տեսակավորման իրազեկման արշավ։

Համայնքային աղբավայրերը ենթակա են ռեկուլտիվացման, ինչի համար համայնքը չունի համապատասխան ֆինանսական միջոցներ։

Աղբահանության նոր օպերատորը դեռևս չի սպասարկում համայնքին, առկա են կազմակերպչական և տեխնիկական կարողությունների խնդիրներ։

Թափոնների տեսակավորման պարագայում դրանց վերամշակման ուղարկման լոգիստիկ ծախսերը մեծ չեն լինի, քանի որ համայնքում առկա են վերամշակող կազմակերպություններ։ Կարիք կա ձևավորելու համագործակցություն համայնքի, տարածքում գործող վերամշակող կազմակերպությունների և համայնքապետարանի միջև։

«Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ն ունի թափոնների երկրորդային տեսակավորման կետ և կարող նպաստել թափոնների տեսակավորման գործընթացին։

Համայնքն ԱԸՊ համակարգի ներդրման համար ունի բավարար նախադրյալներ և պատրաստակամ է աջակցելու ներդրման գործընթացին։

Առաջարկություններ Աբովյան համայնքին

- Ուսումնասիրել թափոնների ոլորտում առկա կազմակերպությունների գործունեությունը՝ ձևավորելու համագործակցություններ ինչպես թափոնների տեսակավորման աջակցության, այնպես էլ վերամշակման ուղղությամբ։
- Սկսել փուլային տեսակավորում՝ սկզբում առանձնացնելով պլաստիկ, թուղթ, ապակի և մետաղ, այնուհետև, անվադողեր, կենցաղային մարտկոցներ, էլեկտրոնային սարքավորումներ։
- Իրականացնել իրազեկման միջոցառումներ թափոնների տեսակավորման համար։
- Սահմանել ժամանակացույց և ապահովել իրազեկում խոշոր եզրաչափերի թափոնների, շահագործումից դուրս եկած էլեկտրոնային սարքավորումների հավաքման և վերամշակման հանձնման համար։
- Որպես «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի հիմնադիր անդամ խորացնել համագործակցությունը ՍՊԸ-ի գործադիր մարմնի հետ համայնքի կոշտ կենցաղային թափոնների, այդ թվում տեսակավորված թափոնների հավաքման և վերամշակման հանձնման համար։
- Աղբահանության կազմակերպման և տեղադրման ծառայությունների ինքնածախսածածկում ապահովելու և այդ ծառայությունների որակը բարելավելու նպատակով բացատրական աշխատանքներ տանել բնակչության շրջանում աղբահանության վարձավճարների հետագա բարձրացման համար։

Մեծամոր համայնք

Մեծամոր համայնքն ընդգրկում է 1 քաղաքային և 30 գյուղական բնակավայր։ Բնակչության թիվը 2026թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 83 762 մարդ։

Համայնքում տարեկան գոյանում է 16753 տոննա կոշտ կենցաղային աղբ, որը տեղադրվում է Արմավիր համայնքի աղբավայրում։ Աղբի յուրաքանչյուր տոննայի՝ Արմավիրի աղբավայրում տեղադրման համար Մեծամոր համայնքը վճարում է 3000 դրամ Արմավիրի համայնքապետարանին։ Համայնքում աղբահանությունը կազմակերպվում է պայմանագրային հիմունքներով՝ «Մաքրություն» ՍՊԸ-ի կողմից Մեծամոր քաղաքում շուրջօրյա ռեժիմով, իսկ գյուղական բնակավայրերում՝ ըստ սահմանված գրաֆիկի։ Օրական սպասարկվում է 4 բնակավայր։

Բնակավայրերի մեծ մասում չկան աղբամաններ։ Աղբամաններ հիմնականում տեղադրված են մեծ բնակավայրերում։

Ըստ համայնքապետարանի տվյալների՝ ընդհանուր կոշտ կենցաղային թափոններից Մեծամոր քաղաքում տեսակավորվում է 15%-ը՝ պլաստիկ, թուղթ, ստվարաթուղթ։ Հավաքված տեսակավորված թափոնները «Մաքրություն» ՍՊԸ-ն

վաճառում է, իսկ ստացված միջոցները փոխանցվում են քաղցկեղով հիվանդ երեխաների բուժմանը:

Մեծամորում աղբահանության համար յուրաքանչյուր բնակչի կողմից վճարվող 200 դրամ գումարը չի ծածկում աղբահանության ամբողջ շղթայի վրա ծախսվող գումարը: Ըստ փորձագիտական հաշվարկների՝ առնվազն անհրաժեշտ է 500 դրամ վարձավճար՝ հաշվի առնելով աղբահավաքման ծախսերը, աղբատարների սպասարկման և աղբավայրում աղբի տեղադրման ծախսերը: Ներկայում համայնքապետարանն աղբահանության կազմակերպման համար յուրաքանչյուր անձի հաշվով կրում է 300 դրամի չափով վնաս:

Մեծամորում «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի կազմակերպած իրազեկման հանդիպման ժամանակ պարզվեց, որ համայնքը պլանավորում է հիմնել սանիտարական նորմերին համապատասխանող համայնքային աղբավայր՝ լուծելու իր համայնքային թափոնների կառավարման խնդիրը: Հանդիպման ժամանակ համայնքապետարանի աշխատակիցներն իրազեկվեցին, որ ՀՀ աղբահանության համակարգի ռազմավարության 2025-2032թթ. միջոցառումների ծրագրով[22] նախատեսվում է աղբահանության և կոշտ թափոնների կառավարման 4 գոտիների ստեղծում և ինտեգրված աղբահանության համակարգի ներդրում: Մեծամոր համայնքը Հանրապետության աղբահանության և կոշտ թափոնների կառավարման կենտրոնական գոտում է, որը ներառում է ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերը: Ըստ ՏԿԵՆ-ի՝ Էկոլուրին ուղարկված 18.03.2026թ ՈՒԱ//10249-2026 պատասխան նամակի՝ ներկայում ընթանում են տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ, որի արդյունքներով կհստակեցվեն կառուցվելիք սանիտարական աղբավայրերի թիվը և տեղադիրքը, ԿԿԹԿ մոդելի կիրառումը:

Մեծամոր քաղաքն ունի պլաստիկի և թղթի տեսակավորման դրական փորձ: Կարող է հեշտությամբ ինտեգրվել ԱԸՊ համակարգում:

Մեծ աշխատանք կա կատարելու համայնքի բնակավայրերում, քանի որ դրանցից շատերում անգամ խառը աղբի համար աղբամաններ չկան:

Համայնքի աղբահանության համար հավաքվող գումարները չեն ապահովում անգամ ծախսածածկում աղբահանության ծառայության կազմակերպման և աղբի տեղադրման համար:

[22] https://api.mtad.am//storage/pages/files/2025/02/pdf/19_10-50-sc122-67b57f2693169.pdf

Համայնքում չի իրականացվում ԱԸՊ համակարգի ներքո հավաքման ենթակա թափոններից շահագործումից դուրս եկած անվադողեր, կենցաղային մարտկոցներ, ապակե շշեր:

Համայնքը կարող է ինտեգրվել ԱԸՊ համակարգին, հատկապես եթե օգտագործվի արդեն գոյություն ունեցող դրական փորձը Մեծամոր քաղաքում:

Առաջարկություններ Մեծամորի համայնքապետարանին

1. Տեղադրել խառը աղբի և տեսակավորման թափոնների աղբամաններ Մեծամորի բոլոր բնակավայրերում:
2. Ընդլայնել տեսակավորվող թափոնների տեսականին՝ հավաքելով նաև ապակի և մետաղ, այնուհետև, անվադողեր, կենցաղային մարտկոցներ, էլեկտրոնային սարքավորումներ:
3. Սահմանել թիրախ՝ մեծացնելու ընդհանուր կոշտ կենցաղային թափոններում տեսակավորված թափոնների հավաքի մասնաբաժինը:
4. Աղբահանության կազմակերպման և տեղադրման ծառայությունների ինքնածախսածածկում ապահովելու և այդ ծառայությունների որակը բարելավելու նպատակով բացատրական աշխատանքներ տանել բնակչության շրջանում աղբահանության վարձավճարների հետագա բարձրացման համար:

Եզրակացություն

Թափոնների կառավարման ոլորտը կարգավորող փաստաթղթերի, փորձագիտական գնահատականների վերլուծության, պետական լիազոր մարմնի, Հայաստանի ամերիկյան համալսարանի ներկայացուցիչների, շահագրգիռ հասարակության և ՏԻՄ-երի ներկայացուցիչների հետ հարցազրույցների, ինչպես նաև համայնքներում անցկացված հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ անհրաժեշտ են համակարգային բարեփոխումներ թափոնների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՀՀ-ում թափոնների կառավարման հինգաստիճան հիերարխիայի ներդրումը մեկնարկային փուլում է: Գործնականում առավել զարգացած է միայն վերջին փուլը՝ թափոնների հեռացումն աղբավայր:

Հայաստանի աղբավայրերը չեն համապատասխանում սանիտարական աղբավայրերի նորմերին։ Դեռևս 1 աղբավայր է Հայաստանում համարվում սանիտարական՝ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի համայնքներին սպասարկող Հրազդանի նոր աղբավայրը, որը շահագործման է հանձնվել 2025թ.։

Թափոնների առաջացման կանխարգելման և դրանց հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելման և նվազեցմանն ուղղված քայլերն անբավարար են։ Հիմնականում մշակվել և ընդունվել են իրավական ակտեր, սակայն դրանց կիրարկումը սաղմնային վիճակում է։ Դրա վկայությունն է վերամշակելի թափոնների ընդամենը 10%-ի վերամշակումը, թափոնների տեսակավորման ցածր մակարդակը։ Հիմնականում թափոնները շարունակում են խառն վիճակում տեղափոխվել աղբավայրեր։ Առկա է թյուր կարծիք, որ Հայաստանում վերամշակման ձեռնարկությունների կարողություններն անբավարար են, մինչդեռ վերամշակող կազմակերպությունները նշում են ավելի շատ տեսակավորված թափոնների վերամշակման իրենց կարողությունների և հումքի պակասի մասին։

Հայաստանում հիմնականում տեսակավորվում է պլաստիկը, թուղթը և ապակին։ Խոհանոցային թափոնները, որոնք ընդհանուր թափոնների կազմում են 46%, չեն տեսակավորվում և չեն վերամշակվում։

Ըստ վերամշակող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ունեցած հարցազրույցների՝ չկան խրախուսման մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան զարգացնել թափոնների վերամշակման ոլորտը։ Չի խրախուսվում նաև վերամշակված նյութերի օգտագործումը։ Բացակայում են վերամշակման ոլորտի վերաբերյալ հավաստի վիճակագրական տվյալները։ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների» ռեեստրը կարիք ունի վերանայման։

ՀԸՀԳ-ի կիրակման ՃՔ-ով նախատեսված ԱԸՊ օրենքի նախագիծը մշակված է և հրապարակված է www.e-draft.am կայքում հանրային քննարկման համար։ Նախագծում առաջարկված է համակարգային մոտեցում, որը նախատեսում է ֆինանսական և տնտեսական մեխանիզմներ թափոնների ծավալների կրճատման, վերամշակման և տեսակավորման ենթակառուցվածքների զարգացման, վերամշակված նյութերի օգտագործման համար՝ ապահովելով «Աղտոտողը վճարում է» սկզբունքի իրագործումը։

Ուսումնասիրված համայնքները՝ Աբովյանը, Մեծամորը և Հրազդանը, պատրաստակամ են ներգրավվել ԱԸՊ համակարգի ներդրման գործընթացում՝ ապահովելով թափոնների տեսակավորում, ինչը կնպաստի համայնքային աղբավայրեր ուղղվող թափոնների ծավալների կրճատմանը, աղբամանների բեռնաթափմանը, շրջակա միջավայրի աղտոտման նվազմանը։

Համայնքները կարիք ունեն շարունակական իրազեկման արշավների՝ ապահովելու ԱԸՊ համակարգի ներդրման գործում իրենց կարևոր դերակատարման և պատասխանատվության մասին տեղեկացվածություն։